

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ

### ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Յայերը տպագրության արվեստին առնչվեցին՝ սկսած 1512 թ., երբ Յակոբ Մեղապարտը Վենետիկում հրատարակեց «Ուրբաթագիրքը»<sup>1</sup>: Սակայն տպագրությունը Յայաստանում կազմակերպելու գործը նի քանի դար ուշացավ այն պատճառով, որ պատմական Յայաստանի տարածքում շարունակաբար պատերազմներ էին ծավալվում պարսիկների ու թուրքերի միջև, որի հետևանքով աճայանում էր հայոց աշխարհը<sup>2</sup>:

Էջմիածնի միաբան և Նոր Չուղայի Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդ (1620-1647) Խաչատուր վարդապետ Կեսարացին վանքում կազմակերպում է կրթության գործը և բացում առաջին տպարանը Մերձավոր Արևելքում<sup>3</sup>: 1638-1642 թթ. նա տպագրում է «Յարանց Վարքը», «Խորհրդատերը», ինչպես և «Ատենի ժամագիրքը», որին կցված էին «Սաղմոսը», «Տոնացույցը» և «Օրինութեանց» բաղվածո նաև<sup>4</sup>: «Տակավին 1639 թ. Խաչատուր վարդապետի ջանքերով Եվրոպա է մեկնում Յովիաննես վարդապետը,- գրում է Արտ. Եա. Սմբատյանը,- որը Յովոնում ծովել տպալով հայերեն գեղեցիկ տառեր՝ տարբեր մեծության, ինչպես և տպագրական զարդեր՝ ամցնում է Լիվոռն, որտեղ 1643 թվին տպագրում է Սաղմոսը յուր նոր տառերով և ապա տպագրածը վերցնելով վերադառնում Նոր Չուղա»<sup>5</sup>: Յաղթահարելով բազում դժվարություններ՝ Խաչատուրի մահվանից հետո Յովիաննեսը 1647 թ. տպագրում է «Պարզատումար Ազարիայի» Երկը, «Լիակատար պատմութիւն» վերնագրով մի գիրք, սակայն Աստվածաշնչի տպագրության գործն այդ ժամանակ չի հաջողվում գլուխ բերել: Փաստորեն, Մերձավոր Արևելքում սա առաջին տպարանն էր՝ դարձյալ հիմնված հայ առևտրականների և էջմիածնի կողմից<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, Յայ գիրքը 1512-1920, Եր., 1981, էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս Յր. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 91, Արտ. Եա. Սմբատեան, Ս. Էջմիածնի միաբանութեան գրական-կրթական գործունեութիւնը և Մայր Աթոռի տպարանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1973, էջ 28, նաև՝ <http://team-aow.discusforum.info/t5006.htm>, նաև՝ «Խորշուղայեցիների գործունեությունը Սպահանում և Եվրոպայում», «Յայաստանի ազգային առլաս», հ. Բ, Եր., 2008, էջ 155, «ՂԱՄ հանրագիտարան», հ. 8, Եր., 1982, էջ 386 (Նոր Չուղայում 1982 թ. դրությամբ տպագրվել է 380 ամուն գիրք: Ցավոր, մեզ չհաջողվեց ճշտել, թե մինչ օրս որքան անուն գիրք է տպագրվել: 1872 թվականից տպարանը գործում է առանց ընդհատումների):

<sup>3</sup> Տե՛ս Արտ. Եա. Սմբատեան, նշվ. աշխ., էջ 29:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 30, նաև Մոհամմադ Մալեք Մոհամմադի, Իրանահայերի և իրանցիների տպագրության պատմությունից, «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հանրապետական գիտաժողովի գեկուցումների ժողովածու), Եր., 2010, էջ 50-53:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Բողոյան, Գրահրատարակչական գործի սկզբնավորումը Մ. Ա. Ս. Էջմիածնում, «Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հանրապետական գիտաժողովի գեկուցումների ժողովածու)», էջ 24:

Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսը (1655-1680) մտածում է Մայր Աթոռում տպարան բացելու մասին: Նոր Զուղայի տպարանի տառերը չհավանելով՝ նա 1655 թ. Եվրոպա է ուղարկում իր քարտուղար Մատթեոս դայիր Շարեցուն: Վերջինս նույն թվականին հասնում է Վենետիկ: Գործի իսկական գիտակներ չգտնելով՝ մեկնում է Յոռմ: Բայց այստեղ նա մեծ դիմադրության է հանդիպում պապական հոգևորականության կողմից: Նույնիսկ հրաման է արձակվում՝ «ոչ ոք յարհեստաւորաց իշխեսց հանել զայս արհեստ և տալ ի ձեռս Յայոց և որք ըստ գործեալ արասցն զայս գործ ծածուկ և կամ յայտնի պատիժս սաստիկ կրելոց են ի մենց»<sup>6</sup>: Շարեցին հաստատվում է Յոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամում և բողոքական ազատ հանրապետությունում կազմակերպում իր տպագրական գործը<sup>7</sup>: Յանդիպելով Թրիստափոր Վան-Դիկին՝ մի տպարանատիրոջ և տառեր ծուլող վարպետի, նա փորձում է հրատարակել Աստվածաշունչը, սակայն այս անգամ հայ կաթոլիկներն են խափանում գործը: Շարեցին տպագրում է Ն. Շնորհալու «Քիսուս Որդին» և հիվանդանալով՝ իր մոտ է կանչում առևտրական Ավետիս Երևանցուն՝ Ուսկան Երևանցի վարդապետի Եղբորը: Նրան առաջարկում է տպարանը միասին շահագործել և օգուտները կիսել, մինչդեռ բարեսիրտ Ավետիսն իր կողմից լրացուցիչ գումարներ է հատկացնում տպարանին և Շարեցուն առաջարկում տպարանը հետագայում նվիրել Ս. Էջմիածնին և Ս. Սարգիս Զորավար Եկեղեցուն: Դա 1661 թ. էր, երբ Մատթեոս Շարեցին վախճանվում է՝ վստահ լինելով, որ տպարանը թողնում է հուսալի մարդու՝ Ավետիսին: Ավետիսը, հայերենի մեջ հնուտ չինելով և առևտրական գործունեությամբ զբաղվելու պատճառով, խնդրում է կաթողիկոսին իրեն օգնական ուղարկել, և 1662 թ. Յոլանդիա է գալիս Ուսկան վարդապետ Երևանցին: Այդ պահից սկսած՝ Էջմիածինն ապահովապես ուներ իր տպարանը Եվրոպայի կենտրոնում և սկսում է ծավալել տպագրական-լուսավորական լայն գործունեություն: Ուսկան Երեվանցու ամենակարևոր գործը դառնում է Աստվածաշնչի տպագրությունը 1666 թ., թեև նա իրականացրել է այլ կարևոր հրատարակություններ ևս<sup>8</sup>: Բայց նրա ձախողանքների և մահվան պատճառը 1674 թվականին դառնում է Երևանցի քահանա Թաղեոս Յամազասպյանը: Նա խանգարում է Ուսկանին՝ նպատակ ունենալով սեփականել նրան պատկանող տպարանը: Ավելի ուշ զդում է կատարվածի համար և տպագրած «ճաշոցի» 7-րդ էջում դնում է իր հորինած ապաշխարության ներբոյանը<sup>9</sup>, ինչպես և իր հիշատակարաններում զդումի աղոթքներ հնչեցնում:

Յայկական հողի վրա տպագրության գործն իրականացնելը հաջողվում է շատ ուշ՝ այն դեպքում, երբ մեզանում կային բոլոր նախադրյալները դա ավելի վաղ անելու: Ո. Իշխանյանը իրավացիորեն նշում է. «Յայկական տպագրությունը իր սկզբնավորումից սկսած 260 տարի գարգացավ օտարության մեջ՝ ծառայելով մայր Երկրին: Այդ ընթացքում մտադրու-

<sup>6</sup> Արտ. Եպ. Սմբատեան, նշվ. աշխ., էջ 30:

<sup>7</sup> Տե՛ս Ս. Չամչյանց, Յայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. 4, Եր., 1985, էջ 658:

<sup>8</sup> Տե՛ս Արտ. Եպ. Սմբատեան, նշվ. աշխ., էջ 34:

<sup>9</sup> Տե՛ս Ն. Ուսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան, Յայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 97:

թյուններ, նաև փորձեր են եղել տպագրությունը հայոց բնաշխարհում հաստատելու, սակայն միշտ մնացել են ապարդյուն.... Քաղաքական իրադրությունը և Սիմեոն Երևանցու դիվանագիտական հնտությունը հնարավորություն են ստեղծում Եջմիածնի դիրքն անրապնդելու»<sup>10</sup>: Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է պարսից խաների, Եկատերինա Երկրորդ կայսրուհու և վրաց Հերակլ Երկրորդ արքայի հետ բարեկամական սերտ կապեր հաստատել, որից հետո նրա նյոււ կարևորագույն գործը Հայաստանում առաջին տպարանի հիմնադրումն է լինում: Նա նախապես դիմում է Պոլսի տպարանատեր Սարգս Սարաֆյանին՝ Եջմիածնին վաճառելու ունեցած բոլոր տպատառերը: Սակայն վերջինս մեծ գին է պահանջում տառերի ու սարքերի համար: Կաթողիկոսը ստիպված դիմում է Զնյուռնիայի հայկական տպարանի տիրոջը՝ Մարկոսին, որ իր տպարանը Եջմիածնին տեղափոխի: Սա ձգձգում է գործը: Փորձ է արվում Ամստերդամի հայկական տպարանի տեր Առաքել Պողոսյանից գնելու տառերը և սարքավորումները, բայց սա էլ չի համաձայնում տպարանը Մայր Աթոռ տեղափոխել: Այս անգամ նա դիմում է հնդկահայ իր բարեկամ Գրիգոր Միքայելյան-Չաքիկյանին և նրանից ստանում է դրամական աջակցություն: Այնուհետև սկսվում են տպարանի շինարարական, տպագրական տառերի պատրաստման աշխատանքները և ձուլարանի կառուցումը: Ավարտից հետո տպարանի ճակատին փակցվում է հետևյալ արձանագրությունը. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի Սուլր Աթոռս Եջմիածնին, ամենայն պարագայիքն հոգաբարձութեամբ Տեառն Սիմեօն սրբազն կաթողիկոսին Երևանցւոյ, արդեամբ Զուղայեցի ի Յինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջեան, որ մականուամբ Չակիկենց կոչի ի յիշատակ իւրեան եւ ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն»<sup>11</sup> (այս արձանագրությունը պահպում է Հայաստանի պատմության թանգարանում): Ինչպես տեսնում ենք, նրանում իբրև տպագրության սկզբնավորողների հիշվում են Սիմեոն Երևանցու և Գր. Միքայելյան-Չաքիկյանի անունները<sup>12</sup>: Իսկ տպարանը կոչվում է ս. Գրիգոր Լուսավորչի անունով:

Կաթողիկոսի տեղակալ Մկրտիչ Շոռոթեցին եռանդուն աշխատանք է տանում գործը կազմակերպելու համար, իսկ Եջմիածնեցի ոսկերիչ վարպետ Յարությունը պատրաստում է տպագրատառեր, զարդերի ու պատկերների տպագրատախտակներ<sup>13</sup>: Պատրաստվում են նաև ծեռքի մամլիչներ, որոնք այսօր պահպում են Մայր Աթոռի թանգարանում:

«1771 թ. Եջմիածնի տպարանը սկսում է գործել: Գրաշարները, տպագրողները, սրբագրիչները Եջմիածնի միաբանության անդամներ էին»<sup>14</sup>: Առաջին տպագիր գիրքը լինում է «Սաղմոսը», որը, սակայն, հաջող տպագրություն չէր: 1772 թ. տպվում է Սիմեոն Երևանցու «Ձքոսարան հոգեւոր» աղոթագիրը՝ մեծ հաջողություն բերելով Երկար սպասված գործին: Այնուհետև տպագրվում է Սիմեոն կաթողիկոսի «Տաղարանը», իսկ 1775-ին՝

<sup>10</sup> Ո. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 90-92:

<sup>11</sup> Արտ. Եա. Սմբատեան, նշվ. աշխ., էջ 45:

<sup>12</sup> Տե՛ս Ո. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 6: (տե՛ս Ե. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավայան, նշվ. աշխ., էջ 487-489):

<sup>13</sup> Տե՛ս՝ Լեռ, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1986, էջ 596:

<sup>14</sup> Ո. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 93:

նրա իսկ կազմած «Տօնացոյցը»: Տպարանի բացումը հայրենի հողում տպագրիչների բազում սերունդների երազանքի իրագործումն էր: Սիմեոն կաթողիկոսը ոչ միայն մեծ եռանդով մասնակցել է տպարանի շինաշխատանքներին, այլև անգամ տպագրական աշխատանքներին: Տպարանի առաջին տեսուչ է նշանակվում Խահակ Գեղամացին, որը նույնպես մի եռանդում անձնավորություն էր: Մ. Օրմանյանն իրավացիորեն նշում է, որ Սիմեոնը դեռևս 20 տարի առաջ էր հղացել տպարան բացելու միտքը<sup>15</sup>:

Տպարանը բացելու ժամանակ Զմյուռնիայից Եջմիածին է գալիս Մարկոս տպագրիչը, որը շատ ջանք է գործադրում տպագրական գործը տեղում կարգավորելու: Բայց և շուտով վախճանվում է և բաղվում Մայր Աթոռի միաբանների ընդհանուր գերեզմանոցում: Նրա տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան համաստեան Ակնեցի տպագիր ծերունազարդ Մարկոսին, որ եկեալ ի Սուրբ Աթոռս և շինեալ զգործարանն, փոխեցաւ առ Քրիստոս բարի մահուամբ....ի ՈՍԻ թուին»<sup>16</sup> (1771 թ.):

Արտ. Եպ. Սմբատյանը նշում է, որ տպարանը գետեղվել է կաթողիկոսի ձմեռվա կացարանի ծայրին կից գտնվող շինության մեջ: Չբավարարվելով այսքանով՝ Սիմեոն կաթողիկոսն արդեն 1771 թ. փորձում է իրագործել նաև թղթի գործարանի կառուցումը Մայր Աթոռում<sup>17</sup>: «Սիմեոն կաթողիկոսը տաճարի հարավային կողմը՝ Մայր Աթոռի պարսպից դուրս, Ղազարապատի հարավային դրան դիմաց, բավականին մեծ շենք է շինում 1774 թվին, այնտեղ, ուր առաջ պարտեզ էր....և Եվրոպայից հմուտ արհեստավորներ հրավիրելով՝ սկիզբ դնում նաև թղթաշինության.... Թղթաշինության առթիվ էլ Սիմեոն կաթողիկոսը 1771 թվից սկսած Չաքիկենց Գրիգոր աղայի հետ թղթակցություն ուներ, որով համոզում էր նրան թղթագործարանի ամբողջ ծախըն էլ վճարել, ինչպես որ հիգացել էր տպարանի ծախըը»<sup>18</sup>: Պարսկաստանից հրավիրված վարպետները թղթապատրաստման գործում հմուտ չեն, և կաթողիկոսը կրկին դիմում է Գրիգոր աղային՝ խնդրելով երկու Եվրոպացի վարպետներ ճարել և ուղարկել Եջմիածին: Այդ ժամանակ Պոլսում էին փարիզեցի Բեյսոնը (Բիսիոն) և Դեսիոռը: Գրիգոր աղան սրանց հետ պայման է կապում, որ գան Եջմիածին, թուղթ պատրաստեն և այդ արհեստը սովորեցնեն աշակերտներին: Նպատակը սեփական թղթագործությունը զարգացնելն էր: 14000 ռուբլով վարպետներն սկսում են գործը, սակայն սկզբից նեթ բազում դժվարություններ են ստեղծում: Երևում է, որ վարպետների միջև ևս ներքին մի անհամաձայնություն կար: Ավագը պահանջում է մյուսին հեռացնել, և կաթողիկոսն այդ պայմանը կատարում է, բայց նա այս անգամ պահանջում է իր հետ վեց տարվա պայմանագիր կապել: Կաթողիկոսը պահանջում է գործով ապացուցել իր ազնվությունը: Բամն այն է, որ խորամանկ վարպետի նպատակն էր գումարը մի կերպ ստանալ և փախչել, սակայն դա թույլ չի տրվում: Երկու տարի մեծ ծախսեր են արվում, բայց գործը տեղից չի շարժվում: Սիմեոն կաթողիկոսն սպանում է նրան խիստ պատիժների ենթարկել, եթե նա չկատարի իր պարտավորությունները: Վերջինս խոստովանում է իր երդումը ոչ ոքի իր արհեստը

<sup>15</sup> Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Եջմիածին, 2001, էջ 3580:

<sup>16</sup> Արտ. Եպ. Սմբատյան, նշվ. աշխ., էջ 46:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47:

<sup>18</sup> Նույն տեղում:

չսովորեցնելու մասին, ապա վեց ամսում գործը կարողանում է կարգավորել: Խսահակ Գեղամացին էլ 1775 թ. մեծ քանակությամբ թուղթ է բերում: Նոր պատրաստված թթով կարողիկոսը տպագրում է իր «Պարտավճար» խորհրդանշական անունը Կրող գիրքը, և մեկ օրինակ ուղարկում Գրիգոր աղային<sup>19</sup>: Նրան տեղեկացվում է, որ ծախսերը կազմել են 7800 թունան: Վերջինս վճարում է դրանք և իբրև շնորհակալության նշան՝ 400 զույգ ընպանակներ է ուղարկում Մայր Աթոռ, որոնց վրա գրված էր. «Ի բարի վայելուն Սիմեոն կաթողիկոսին, ի ՈՄԻՉ (1777 թ.) հայոց թուին»<sup>20</sup>: Հայտնելով իր երախտագիտությունը՝ կաթողիկոսը տեղեկացնում է թրագործների խարդախության ու միաժամանակ իր հաջողությունների մասին: Դա վերաբերում էր հատկապես տեղում պատրաստված թղթի վրա՝ ներքևի անկյունում, իրենց «Սիմեոն և Գրիգոր» անունների փակագրին և «Ս. Էջմիածին» գրությանը: Ուղարկված նոր գումարներով են տպագրվում Սիմեոն կաթողիկոսի «Զբոսարան հոգեւորը» և «Տօնացոյցը», որոնք անվճար տրվում են հայկական բոլոր եկեղեցիներին:

1781 թվականին վրաց Յերակլ Երկրորդ արքան (1744-1798) պայմանագիր է կնքում պոլսահայ Պողոս Շովիաննիսյանի (Արապյան) հետ՝ գործարկելու առաջին վրացական տպարանը Թիֆլիսում: Տուն վերադառնալիս վարպետ Պողոսը լինում է նաև Ս. Էջմիածնում և տպարանին է նվիրում իր մոտ եղած նոր տառատեսակներն ու հետո մեկնում Պոլիս<sup>21</sup>: Այսպես, շատ ազդեցիկ հայեր՝ նշանավոր քաղաքական, կրոնական ու մշակութային գործին Հայաստանում՝ այն իր նպատակին հասցնելու համար, որի մեջ և իրենց անձնական ներդրումն են ունենում: Հայ հոգևոր դասը և կրոնական վերնախավը ևս ցուցաբերում է մեծ նախանձախնդրություն ու կամք հայոց պետականության վերականգնմանը նպաստող մշակութային ձեռնարկումների մեջ:

Բացառությամբ Հակոբ Մեղապարտի գործունեության, որ դեռ համակողմանի ուսումնասիրության կարիք ունի հենց այս տեսանկյունից, մյուս բոլոր տպագրիչների կատարած ուղղակի կամ անուղղակի ձևով կապված է հայոց հայրապետների ջանքերի հետ, որոնք խրախուսում ու հետևում էին տպագրիչներին՝ հայրենասիրական գաղափարներ արթնացնելու հայ հասարակության տարբեր խավերի և ամենուր սփոռված համայնքների մեջ:

Հայ 2-րդ տպագրի Աբգար Դպրին ու նրա որդի Սուլթանշահին Շոռն է գործուղում Միքայել Սեբաստացի (1547-1556) հայրապետը: Շոռնի պապին ուղղված իր նամակում Աբգարին նա ներկայացնում է իբրև Ռուբինյան տոհմի շառավիղներից և թերևս նպատակ ունի վերադարձին նրան տեսնելու Հայոց նորաստեղծ գահի գահակալ<sup>22</sup>: Իսկ դա հայոց պետակա-

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 53:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>21</sup> Տե՛ս Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1946, էջ 178-183, նաև՝ Ա. Աղամյան, Վրաց Յերակլ Բ թագավորի և տպագրի Պողոս Շովիաննիսյանի պայմանագիրը, «Քանթե՛ր Մատենադարանի», հ. 3, Եր., 1956, էջ 118:

<sup>22</sup> Տե՛ս Ս. Միհրարյան, Աբգար Դպրի Թոխարեցին և իր տպագրած գրքերը, «Գիրքը պատմանշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հանրապետական գիտաժողովի գեկուցումների ժողովածու)», էջ 44-50: Ցավոք, այդ ծրագիրը հնարավոր չի լինում կյանքի կոչել: Բայցևայնական, փորձ է արվում մշակութային ուղղվածություն տալ սկսված բարի նախաձեռնությանը: Պիհս 4-րդ պապն

նության վերականգնման խելացի ու խիզախս մի փորձ էր<sup>23</sup>: Իրականում Միքայել կաթողիկոսից սկսած՝ գործնական քայլեր են արվում՝ հաշտեցման եզրեր գտնելու կարողիկ եկեղեցու հետ՝ հետագա կրոնական և քաղաքական շփումները դյուրացնելու նպատակով: Բնակ պատահական չէր, որ այս ժամանակներում կրկին աշխույժ խոսակցություններ են ծագում «Դաշանց թղթի», այսինքն՝ այն ավանդական դաշինքի շուրջ, որ IV դարի սկզբում կնքել էին Տրդատ Սեծը և Գր. Լուսավորիչը Կոստանդիանոսի և Սեղբեստրոս հայրապետի հետ՝ փոխադարձ օգնության և աջակցության համար<sup>24</sup>: Բայց պահը չէր հասունացել որևա համար:

Ինչ վերաբերում է տպագրված գրքերի որակին և նրանց բովանդակային առանձնահատկություններին, ապա դրանք ունեին ինչպես կրոնական ուղղվածություն, այնպես էլ նշանակություն: Դայ գրատպությունը նշանավորվեց նախ քաղաքական, հետո միայն կրոնադավանաբանական, կրթադաստիարակչական ու գիտամշակույթային նշանակությամբ:

Եջմիածնի տպարանի ստեղծման և հետագա գործունեության հետ կապված են եղել նշանավոր շատ մարդիկ: XVIII դ. 90-ականների սկզբին վաճրում ուսանել և հետագայում տպարանում աշխատել է նաև հայ առաջին հուշագիրներից մեկը՝ Դարություն Արարատյանը<sup>25</sup>: Արդեն 240 տարուց ավելի հայրենի հողում շարունակաբար գործում է հայ գրատպության նշանավոր օջախներից մեկը՝ Մայր Աթոռի տպարանը: Դիշարժան փաստ, որ արժեկուլում է նորովի 2012 թվականի հայ գրատպության 500-ամյակի սքանչելի հոբելյանով:

**САРГИС МХИТАРЯН – Первопрестольный св. Эчмиадzin и армянское книгопечатание.** – Статья посвящена открытию первой в Армении типографии (1771) и бумажной фабрики (1774), а также его предыстории. Еще в 1638 г. Хачатур Кесараци основал в Новой Джуге типографию, но перевезти на родину хотя бы часть оборудования не удалось. Серьёзные шаги делал на этом пути католикос Иакоб Джугаеци (1655–1680). Но посланные в Европу Матевос Цареци, Аветис Ереванци и Воскан Ереванци столкнулись с непреодолимыми трудностями и вынуждены были открыть типографии в Амстердаме. И лишь католикос Симеону

---

արտոնում է Աբգարին ծեռք բերել կամ պատրաստել հայերեն տառեր՝ տպագրության գործ ծեռնարկելու համար: Աբգարի որդի Սուլթանշահը, հոր հետ ավարտելով գրքերի տպագրությունը Հռոմում և Պոլստամ, իր կյանքի երկրորդ կեսին (Երկի թե հոր մահվանից հետո՝ 1585 թ.) կրկին վերադարձնում է Հռոմ: Ստանալով ժամանակի համար հիմնավոր կրթություն՝ այնուհետև ծեռնարկում է կրոնավոր՝ ժառանգելով Դայր Բարտոլիմեո (Բարդուղիմեոս) Աբգարը անունը: Ապրում է մինչև 1623 թ. (տե՛ս Մայր Աթոռը, Տիգրան Գույումճեան, Հեննինգ Լեմանն, Դայկական հնագիտութեան ալբոն, Ս. Էջմիածնի, 2006, էջ 19):

<sup>23</sup> Տես Գ. Զարպիհանալեան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 37- 41, նաև Մայր Աթոռը, Տիգրան Գույումճեան, Հեննինգ Լեմանն, նշանակում, էջ 19:

<sup>24</sup> Տես Մ. Չամչյանց, Դայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. Ա, Եր., 1985, էջ 407- 408, նաև Յր. Բարթիկյան, «Դաշանց թուղթ», կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, «Պատմա-բանափրական հանդես», 2004, թ. 2, էջ 78-93, Մ. Շիրիմյան, «Սեղբեստրոսի վարքը» և «Դաշանց թուղթը», «Բանքեր Մատենադարանի», հ. 17, Եր., 2006, էջ 53 - 60:

<sup>25</sup> Տես «Դայ նոր գրականության պատմություն», հ. 1, Եր., 1962, էջ 216 - 217:

Ереванци с его широким кругозором и связями удалось довести дело до конца. Получив помощь от своего близкого знакомца Григора Микаеляна-Чакикяна из Индии, он учредил типографию и дал ей имя Григора Просветителя. Первой выпущенной там книгой была Псалтирь. За нею последовал молитвенник «Духовный путь». Спустя три года Симеон выстроил бумажную фабрику, которая не без труда заработала в 1775-м. Тогда же Исаак Гегамаци привёз из Европы большое количество бумаги. Это позволило напечатать «Месяцеслов», имевший исключительное значение для первопрестольного Эчмиадзина, поскольку регулировал церковные праздники. Трудности на этом не завершились, однако вот уже около двух с половиной веков типография с успехом служит делу национального просвещения.

**SARGIS MKHITARYAN – *Mother Cathedral of Holy Etchmiadzin and the Armenian Typography*.** – The article is devoted to the coverage of the circumstances under which the foundation of the first printing house in Armenia became possible in 1771. Particular reference has been made to the foregoing events having delayed the implementation of that important scientific-cultural work since “molding” letters up to paper-making technology disruption of masters Beyson and Dersieur but His Holiness Catholicos of Etchmiadzin, Simeon Yerevantsi, managed to correct the situation. Khachatur Kesaratsi’s first printing house was founded in New Julfa in 1638 but it was impossible to bring home some of the letters or devices homeland. So Catholicos Hakob Jughayetsi /1655-1680/ undertook serious measures, aimed at the foundation of a printing house in Mother Cathedral of Holy Etchmiadzin. But Mateos Tseretsi, Avetis Yerevantsi and Voskan Yerevantsi, sent to Europe, facing a range of difficulties, had to found publishing houses in Amsterdam.

Only thanks to the efforts made by broad-minded religious and political figure Catholicos Simeon Yerevantsi and his relations with Empress Ekaterina II, King Hercules II and Persians a solution was given to the problem. Afterwards, receiving the support of his old friend, Indian Armenian Grigor Mikayelyan-Zaqikyan, for constructing building and purchasing necessary equipment, he founded a printing house and called it after Grigor Lusavorich.

“Saghmosaran” was the first printed book with some shortcomings, “Zbosaran Hogevor” – the second one. Catholicos Simeon Yerevantsi founded the building of the paper factory in the summer of 1774 in order to make paper production available at the spot. The opening ceremony of the building took place in 1775. Despite all the difficulties the supervisor of the printing house, Isahak Geghamatsi, managed to bring a large quantity of papers from Europe. Later “Tonatsuyts” (“Calendar”) was printed which became a significant event for the Armenian Church both as a printing product and a corpus regulating religious holidays. The printing house of Mother Cathedral of Holy Etchmiadzin, founded thanks to the efforts made by His Holiness Simeon Yerevantsi, served in the progress of the Armenian culture for more than 240 years. In this institution numerous works of classics have been and are printed.